

որոնք նահատակուեցան Կեսարիոյ մէջ: Այս քաղաքի եկեղեցիին աւերակները կը յիշատակուին ուղեգիր-
ուխտաւորներու կողմէ. անոնց սպիտակ մարմարէ
սիւներուն խոյակները՝ կ'ըսուի թէ մինչև հիմակ կը
տեսնուին:

Այս քաղաքէն քառորդ մղոն հեռու գէպի հա-
րաւ-արեւելք, կը գտնուի Ս. Աննա անուանով հնա-
գոյն մայր եկեղեցիի մը լաւ կերպով պահպանուած
աւերակները: Այս եկեղեցին ամբողջապէս շինուած է
տաշուած քարերով: Ըստ աւանդութեան, անիկա կա-
ռուցուած է Միքիա մարգարէին գերեզմանին վրայ:
Այս մարգարէին մասունքները գտնուած են Մեծն
Թէոդոսի օրով, Eleutheropolisի մօտ: Յերոնիմոսէ կ'ի-
մանանք որ սրբուհի Պաւլինէ այցելած է Միքիայի
գերեզմանը՝ որ նոյն ատենները եկեղեցիի վերածուած
էր: Սոցոմէն կը գրէ թէ Eleutheropolisի շրջակայքը,
Կափար գիւղին մէջ գիւղացի մը գտած է Զաքարիա
քահանայապետին նշխարները և որ Կ. Պոլիս փոխա-
գրուած են Թէոդոս Բ.ի օրով (Mis. Բ. էջ 184-85):

Փղշտացուց գլխաւոր քաղաքներէն մին էր Ասկա-
դոն որ է նաև աշխարհի հին քաղաքներէն մէկը. բուռն
պատերազմներ ունեցած են Ասկաղոնացիք նգիպտա-
ցիներու և Իսրայելացիներու դէմ: Հերովդէս Ասկա-
ղոնացի էր, թէպէտև քաղաքը իրեն չէր վերաբերեր,
բայց զեղեցկացուց զայն աղբիւրներով, բաղնիքնե-
րով և մեծամեծ շէնքերով:

Ասկաղոն չատ ամուր կերպով յարած էր հեթա-
նոսութեան, այդ պատճառաւ քրիստոնէութիւնը զիւ-
րութեամբ չը տարածուեցաւ հոն: Դ. դարէն սկսեալ
հոն եպիսկոպոսական աթոռ հաստատուած էր, առա-
ջին եպիսկոպոսը կը կոչուի Ղոնկինոս, և երկրորդը՝